§ 8.3. Հենքային տվյալների ղեկավարման համակարգեր

Այժմ ծանոթանանք հենքային տվյալների ղեկավարման *Microsoft Access 2007* համակարգին:

Համակարգի միջավայր մտնելու համար պետք է մկնիկի օգնությամբ հաջորդաբար կատարել հետևյալ քայլերը.

Start ⇨ All Programs ⇨ Microsoft Office ⇨ Microsoft Office Access 2007

Այժմ *Access*-ը սպասում է հետևյալ հրահանգներից որևէ մեկին.

- գոյություն ունեցող որևէ հենք բացել,
- նոր հենք ստեղծել:

Տվյալների որևէ հենք բացելու համար անհրաժեշտ է.

- բացված պատուհանի (նկ. 8.2) աջ մասում տեղակայված *Open Recent Database* բաժնում ներառված տվյալների հենքերի ցուցակից ընտրել անհրաժեշտը,
- եթե փնտրված ֆայլը բացված ցուցակում չի ընդգրկված, ապա որոնումը շարունակել More... կոճակի օգնությամբ:



Նկ. 8.2. *Microsoft Access 2007*-ի աշխատանքի նախնական պատուհան

Տվյալների նոր հենք ստեղծելու համար անհրաժեշտ է.

- ընտրել *New Blank Database* բաժնի *Blank Database* կոճակը (նկ. 8.2)
- բացված տիրույթի (նկ. 8.3) *File Name* դաշտում նշել ստեղծվող հենքի անվանումը (նկարում բերված օրինակում՝ *Database 11*): Ստեղծվող ֆայլի պահպանման հասցեն ընտրել կոճակով բացված պատուհանում,
- սեղմել *Create* կոճակը:



Նկ. 8.3. Նոր ֆայլ ստեղծելու տիրույթ

Տվյալների հենք կարելի է ստեղծել նաև *Template Categories* խմբի *From Microsoft Office Online* հրամանով (նկ. 8.2)՝ բացվող շաբլոններից որևէ մեկի օգնությամբ:

Ms Access 2007 համակարգի հիմնական աշխատանքային պատուհանն ունի նկ. 8.4-ում բերված տեսքը:

Ծանոթանանք պատուհանի հիմնական բաղադրիչներին:

Արագ հասանելիության վահանակը նախատեսված է առավել հաճախ կիրառվող հրամանների կոճակների համար:

Հրամանային ներդիրների տողը 5 ներդիր է պարունակում: Նկ. 8.4-ում բացված է *Home* ներդիրը: Ինչպես երևում է նկարից՝ այն յոթ խումբ է ընդգրկում. *View*, *Clipboard, Font, Rich Text, Records, Sort & Filter, Find*, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին այլ *հրամանների կոճակներ* է ներառում:



Նկ. 8.4. Microsoft *Access 2007* համակարգի պատուհան

Վերնագրի տողում արտածվում է տվյալ պահին խմբագրիչի աշխատանքային տիրույթում առկա փաստաթղթի անվանումը (նկ. 8.4-ում՝ *Database5*):

Վիճակի տողում ինֆորմացիա է արտածվում թողարկված տվյալների հենքի և կատարվող գործողությունների մասին:

Անցումների տիրույթում արտածվում են տվյալների հենքի օբյեկտները, ինչը հնարավորություն է տալիս ընտրել դրանցից անհրաժեշտը:

Ակտիվացված օբյեկտների ներդիրների տիրույթը ներառում է տվյալների հենքի ակտիվացված օբյեկտների անվանումները, ինչը ևս հնարավորություն է տալիս ընտրելու դրանցից անհրաժեշտը:

Office կոճակով բացվում է ֆայլերի հետ առավել հաճախ կիրառվող հրամանների մենյուն (նկ. 8.5), որի բաղադրիչներին կծանոթանանք հետագայում:



Նկ. 8.5. *Office* կոճակի պատուհան

Ms Access-ի աշխատանքը կարելի է ավարտել հիմնական պատուհանի փակման ☒ կոճակով:

Օգտակար է իմանալ

- *Access 2007*-ով ստեղծված ֆայլերն ունեն *.mdbx* ընդլայնումը:
- Տվյալների հենքում հայատառ ինֆորմացիա ներմուծելու նպատակով անհրաժեշտ է ընտրել հայկական տառատեսակի *Unicode* տարբերակը:

Հարցեր և առաջադրանքներ

1. *Microsoft Access* համակարգի հիմնական աշխատանքային պատուհանի ի՞նչ հիմնական տիրույթներ գիտեք:
2. Ինչպե՞ս կարելի է համակարգչում առկա որևէ հենք բացել:
3. Ինչպե՞ս են տվյալների նոր հենք ստեղծում: